

ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ագաթանգեղոսի պատմությունն այն մատյաններից է, որը վերջին երկու հարյուրամյակում համեմատաբար ավելի շատ է ուսումնասիրված, ուստի այդ երկի մասին նոր խոսք ասելը հնարավոր է միայն նոր բնագրեր հրատարակելու գեպքում: Այդ տեսակետից Ա. Տեր-Ղևոնդյանի «Ագաթանգեղոսի արարական նոր խմբագրությունը (արաբերեն բնագիր և ուսումնասիրություն)»¹ աշխատության հրատարակումը ագաթանգեղոսիությունը մի քայլ առաջ է տանում և նոր խոսք ասում: Գրքին ծանոթանալիս, զգացվում է, թե ինչպես հեղինակը հաղթահարելով բազում գծվարություններ, կարողացել է հաջողությամբ լույս ընծայել այն, և այդ հաջողությունը ամենից առաջ պետք է վերագրել հեղինակի ո՛չ միայն արաբերենի հմուտ իմացության, այլև նրա ունեցած գիտական լայն պատրաստվածության:

Ներածականում նա խոսում է մինչև հիմա Ագաթանգեղոսի պատմության մեղ հայտնի բոլոր խմբագրությունների մասին և գրանք բաժանում երկու խմբի.

ա. մեզ հասած հայերեն բնագիրը և նրանից կատարված թարգմանությունները (հունարեն, նորահայտ արաբերեն և ուրիշներ):

բ. մեզ չհասած հայերեն բնագիրը (Ֆետեբելով՝ Ժ. Դարիտին նա այն անվանում է «վարք»)² հունարեն (հրատարակություն Ժ. Դարիտի)³ և արաբերեն (հրատարակություն Ն. Մառի)³ թարգմանությունները:

Իման բաժանումը թեև որոշ հստակություն է մտցնում Ագաթանգեղոսի պատմության տարբեր խմբագրությունները ավելի ճիշտ պատկերացնելու համար, սակայն երկրորդ խմբագրության «վարք» անվանումը, մեզ անհաջող է թվում: Բացի գրանից, զոհացուցիչ կերպով չի բացատրված նաև երկրորդ խմբագրության (պայմանականորեն՝ վարք) ծագումը:

Բանն այն է, որ երկրորդ խմբագրությունը կարող էր ուղղակի կապ ունենալ Ագաթանգեղոսի IV գարի նախնական խմբագրության հետ և ոչ թե՛ ծագած լինել V գարում խմբագրված Ագաթանգեղոսի պատմությունից, որն այժմ մեր ձեռքի տակ է:

Այստեղ պետք է նկատի ունենանք Գեորգ Ասորու՝ Արարաց եպիսկոպոսի 714 թ. Յեշուա զննագրաց քահանայի գրած նամակի տեղեկությունները Գրիգոր Լուսավորչի մասին, որոնք նա վերցրել է հավանաբար մեզ չհասած նախնական խմբագրությունից: Մխիթարյան հայրերից Լ. Հաշյանը իր ուսումնասիրության մեջ Գեորգ եպիսկոպոսի այս նամակի համապատասխան բաժինը մեզ հասած Ագաթանգեղոսի պատմության հետ համեմատելով եկել է այն եզրակացության, որ «ասորին և հայն թեև նույն գիրքը կներկայացնեն, բայց ոչ միևնույնը»⁴:

Ագաթանգեղոսի պատմության և Գեորգ արարաց եպիսկոպոսի օրինակի միջև էական տարբերություններ գոյություն ունեն. նախ հիմնական տարբերություններից մեկն այն է, որ հայկական Ագաթանգեղոսում եթե Գրիգոր Լուսավորչի ծագումով պարթև է, ապա այս ասորական բնագրում նա հոռմայեցի է ազգությամբ. եթե առաջինում Գրիգորը հայոց Տրդատ թագավորի արքունիքում էր ծառայում, ապա սա, ըստ Գեորգի տեղեկությունների, «հայոց աշխարհն եկա՛լ կամ Դիոկղեսիանոսի քրիստոնյաների գեմ հարուցած հալածանքներից (ստիպված) և կամ մեզ

¹ Երևան, 1968.

² G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange. Cité del Vaticano, 1946.

³ Н. Марр, Крещение Армян, Грузин, Абхазов и Аланов Святим Григорием, СПб., 1905.

⁴ Լ. Տաշյան, Ագաթանգեղոս առ Գեորգայ ասորի եպիսկոպոսին, Վիեննա, 1891, էջ 34:

անժանոթ մի այլ պատճառով⁵։ Այս և նման այլ էական տարբերությունները մեղ բերում են այն համոզման, որ Գևորգը ոչ թե իր ձեռքում ունեցել է Աղաթանգեղոսի պատմության մի հակական խմբագրություն և պատճառաբանությունից կատարված հունական կամ ասորական թարգմանություն, այլ, ինչպես պիտի կարծել, IV դարի Գրիգորի «վարքի» (նախնական խմբագրություն) հունարեն մի օրինակ, հունարեն ենթասույն, որովհետև ասորերեն այս բնագրում հատուկ անունների հունական ձևերն ու Գրիգորին՝ որպես հունական եկեղեցու քարոզիչ ներկայացնելը, վկայում են վարքի հունական ծագման մասին։ Այս մասին գրելիս լավ կլիներ, որ Ջեր-Ղևոնդյանը կանգ առներ նաև «Նեստորականների պատմություն» աշխատության մեջ պահանջված Գրիգոր Լուսավորչի կյանքի ու գործունեության հետ կապված հատվածի վրա⁶, որովհետև այդ հատվածը ևս իր բովանդակությամբ տարբերվում է մեղ հասած խմբագրություններից և ավանարար իր հիմքում պահպանել է IV դարի նախնական խմբագրության մի օրինակը։

Այս բոլորը խոսում են այն մասին, որ հեղինակը ոչ թե սոսկ մի ակնարկով պետք է անցներ Աղաթանգեղոսի IV դարի նախնական խմբագրության հարցի վրայից ասելով, որ Աղաթանգեղոսը IV դարից ունի աղբյուրներ, այլ անհրաժեշտ էր, որ նա ավելի մանրամասն կանգ առներ այս շատ կարևոր հարցի վրա։

Արամ Տեր-Ղևոնդյանը խոսելով Աղաթանգեղոսի բնագրային հարցերի մասին, դժբախտաբար, շատ համոռոտ է շարադրել հայկական Աղաթանգեղոսի Առաքարանի և հունական Լավրենտյան օրոնակում Արտաշիրի ապստամբության առեղծվածային հատվածը. անհրաժեշտ էր այդ հարցի վրա ևս ավելի մանրամասն կանգ առնել։

Ուսումնասիրության ամենակարևոր մասն առաջին գլուխն է։ Հետաքրքրական է, որ նորահայտ ձեռագիրը նույն ս. Կատարինի վաճառում է հայտնաբերվել, որտեղ գտնվել էր մյուս խմբագրության արարներն թարգմանությունը։ Իհարկե, այս նորահայտ արարներն օրինակը տարակուսանք չի առաջացնում, որ այն թարգմանվել է հունականից, սակայն ամենահետաքրքրականն այն է, որ սույն արարական թարգմանությունը կատարված է այնպիսի հունական ձեռագրից, որը շատ ավելի հարազատ է եղել հայկական բնագրին, քան մինչ այժմ մեզ հայտնի հունական ձեռագրերը։

Եղինակը քննարկելով նորահայտ արարական Աղաթանգեղոսի այս բնագիրը և հիմնվելով նրա տվյալների վրա, փորձում է լուծել հատվածների, վերնագրերի հարցը։ Իրոք, կազմված լինելով տարբեր աղբյուրներից, Աղաթանգեղոսի պատմությունը ունի ինքնուրույն հատվածներ. որոնք իրենց վերնագրերը պետք է ունեցած լինեին։ Հեղինակը հենվելով արարական այս նորահայտ բնագրի լեզվական տվյալների վրա, արժեքավոր եզրակացություն է անում և գրում, որ արարներն այս թարգմանությունը կատարված է IX—X դարերից ոչ շուտ և XII դարից ոչ ուշ։

Սույն ուսումնասիրության շատ արժեքավոր և հետաքրքրական բաժիններից է երրորդ գլուխը։ Տեր-Ղևոնդյանը այս գլխում տալիս է Աղաթանգեղոսի պատմության մեջ եղած հայկական անունների կրած փոփոխությունները և կատարում այդ բառերի եռալեզվյան համեմատությունը՝ հայերեն-հունարեն-արարերեն։

Արարներն նորահայտ Աղաթանգեղոսի պատմության համեմատությունը հունականի հետ պարզել է որոշ շեղումներ և աղավաղումներ։ Այս աշխատանքի արդյունքները հեղինակը տվել է ուսումնասիրության չորրորդ գլխում, որտեղ և տրված է շեղումներ ունեցող մասերի թարգմանությունը։ Նման ուսումնասիրության մեջ դա բավական է, բայց հետագայում ցանկալի է, որ հեղինակը տա Աղաթանգեղոսի արարներն այս նորահայտ բնագրի ամբողջական թարգմանությունը։

Վերևում նշված մեր առաջարկությունները ոչնչով չեն նսեմացնում ուսումնասիրության արժեքը, և, ինչպես ասացինք, Արամ Տեր-Ղևոնդյանի այս աշխատությունը լուրջ ներդրում է աղաթանգեղադիտության առաջընթացում։

2. Գ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

⁵ G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange, p. 403.

⁶ Addai Scher, Histoire Nestorienne (chronique de Seert), première partie (II), Paris, „Pat. Orientalis“, t. V.